ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը այս մայիսին Լոնդոնի հայ գաղութին տված այցելության առթիվ, Լոնդոնում հեռաբրբրվեց նաև անմահ վիպասան Բաֆֆու արխիվով և անձնական գործածության իրերով։

Այս առթիվ Նորին Ս. Օծությունը իր քարտուղար պ. Հայկ Առաքելյանին պաշտոն հանձնեց անձամբ զբաղվել այդ հարցով։

Պ. Հայկ Առաքելյանին հաջողվեց տեսակցել Լոնդոնում Բաֆֆու ավագ որդու՝ Արշակ Մելիք-Հակոբյանի այրի տիկին Ալեքսանդրա Կորմիկ Մելիք-Հակոբյանի հետ և նրանից ստանալ Բաֆֆու անձնական իրերից հետևյալները.

1. գրողի տնային վերնազգեստը։
2. ծխամորճը.
3. ծխախոտի քանդակազարդ տուփը.
4. գրիչ՝ նվիրված գրողին 1884 թվականին.
5. թանաքամանը.
6. գրասեղանի այլ պարագաներ.
7. լուսանկարներ՝ 2 մեծադիր և 14 հատ փոքր՝ ընտանիքի անդամների.
8. երեք կտոր գիրք հեղինակի ֆակսիմիլեով մեր պատմության վերաբերյալ։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ իրերը բերված են Երևան և հանձնված Գրական թանգարան։ Թանգարանի վարչության անունից շնորհակալական գիր է ուղարկված տիկին Ալեքսանդրա Կորմիկ Մելիք-Հակոբյանին։

2. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Հայկական մանրանկարչության և քանդակագործության ականավոր վարպետ հանգուցյալ Տարագրոս Ստեփանի Տեր-Վարդանյանի հարազատները Մայր Աթոռի թանգարանին են նվիրել հանգուցյալ արվեստագետի մի շարք արժեքավոր նկարչական և քանդակագործական ստեղծագործությունները, որոնց թվում՝

1. Ս. Էջմիածնի մեծադիր յուղաներկ նկարը, 1904 թ.
2. Սելիմի իջևանի գրչանկարը, 1937 թ.
3. Հիսուսի մեկ յուղաներկ փշյա պսակով գլուխը.
4. Ս. Էջմիածնի Մայր Տաճարի մակետը փայտից.
5. մի մեծ խաչքարի մակետը գաջից.
6. մի փոքր խաչքարի մակետը գաջից.
7. Գառնիի հեթանոսական տաճարի մակետը գաջից.
8. մի շարք յուղանկարներ և հայ մանրանկարչության գունավոր նմուշներ։

Հանգուցյալ արվեստագետը ծնվել էր 1878 թվականին Երևանում և վախճանվել՝ 1953 թվականի ապրիլին։

Մեծ է Տարագրոսի թողած վաստակը։ Նա իր ստեղծագործություններով անմահացրել

է իր անունը և գալիք սերունդներ օրհնությամբ կհիշեն նրա անմոռաց վաստակը։

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ ե-ղիցի»։

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետը հանդուցյալ արվեստագետի հարազատներին տվեց շնորհակալական գիր՝ Մայր Աթոռի թանգարանին նվիրատվության առիթով։

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

(Յուղաներկ Տարազոսի, 1904 թ.)

3. ԵՐԵՎԱՆԻ ԹԱՏԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Նորին Ս. Օծութիւն Վեհափառ Հայրապետի Միլանոյում գտնվելու օրերին քարտուղար պ. Հայկ Առաքելյանը, Նորին Ս. Օծության կարգադրությամբ, հետաքրքրվեց հանրածանոթ դերասան Օվի Սևումյանի արխիվով։

Պ. Հայկ Առաքելյանը Միլանոյում տեսակցեց տիկին Լյուսի Սևումյան-Արզումանյանի հետ, որը Երևանի Թատերագիտական թանգարանին նվիրեց մեծանուն դերասանի զանազան դերերում, կյանքում նկարված 17 նկար։

Այս նկարները բերված են Երևան Նորին Ս. Օծության կարգադրությամբ և հանձնված Երևանի Թատերագիտական թանգարանին։ Թանգարանի վարչությունը շնորհակալության գիր է ուղարկած Միլանո՝ տիկին Լյուսի Սևումյան-Արզումանյանին։